



*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ*

*ՎԱՂԱՐՇԱՊԱՏ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
2021 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 2 ՆԻՍ*

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2**  
**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի**  
**ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ**

2021 թվականի դեկտեմբերի 24-ին ժամը 14:00-ին Վաղարշապատ համայնքի ավագանու նստավայրում՝ քաղաք Էջմիածին, Մբ.Մ.Մաշտոցի փողոց 0 հասցեում տեղի ունեցավ Վաղարշապատ համայնքի ավագանու արտահերթ թիվ 2 նիստը, որին մասնակցում էր Վաղարշապատ համայնքի ավագանու 27 անդամ, հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

Վաղարշապատ համայնքի ավագանու արտահերթ թիվ 2 նիստին հրավիրված էին համայնքային կառույցների ներկայացուցիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Գ.Հարությունյանը:

Նիստն սկսվեց Հայաստանի Հանրապետության հիմնով և Էջմիածին համայնքի հիմներով:

Նիստն անցկացվում էր առցանց հեռարձակմամբ:

Նախագահողը՝ համայնքի ղեկավարը, ավագանու անդամներին ներկայացրեց նիստի օրակարգի հարցերը և առաջարկեց քննարկել դրանք ու հաստատել օրակարգը:

Օրակարգի նախագիծը դրվում է քվեարկության:

**Քվեարկությանը մասնակցեց** – ավագանու 27 անդամ

**Քվեարկության արդյունքները՝**

կողմ - 27

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

Ծանուցում՝ որոշման տակ բացակայում են ավագանու անդամներ՝ Նաիրա Գրիգորյանի, Քրիստինե Հակոբյանի, Ջիվան Աբրահամյանի և Կարինե Միքայելյանի ստորագրությունները, չնայած նարան, որ վերջիններս մասնակցել են քվեարկությանը և քվեարկել են կողմ:

**ՈՐՈՇՎԵՑ** – Հաստատել Վաղարշապատ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 24-ի արտահերթ նիստի օրակարգը և քննարկել առաջադրված հարցերը, այն է՝

**1. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**2. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԷԶՄԻՄՈՒՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 29.05.2007 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 4 ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԷԶՄԻՄՈՒՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԻՆԱՆՇԱՆԸ ԵՎ ԴՐՈՇԸ ՈՐՊԵՍ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԻՆԱՆՇԱՆ ԵՎ ԴՐՈՇ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՄԵԶ ԳՐԱՌՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՈՄԿԵՀԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՆՍԱՎԱՅՐԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**4. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**6. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**7. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆՈՐ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**8. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ 2022Թ. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱՆ ԵՆԹԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ «ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏ» ՀՈԱԿ-Ի, «Մ. ԵԿՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ԵՎ «Ս. ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-ՆԵՐԻ ԴԱՀԼԻՃՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ «ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏ» ՀՈԱԿ-Ի ՊԱՐԱՍՐԱՀՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1 ՄԱՐԶԱԴՊՐՈՑ ՀՈԱԿ-Ի ԴԱՀԼԻՃՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՐԵՄԱՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՄՆՆԴԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ ԵՎ ՕՐԱԿԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18 - Ի N 133-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին քաղաքի ավագանին ընդունում է թիվ 3 որոշումը:

**Օրակարգի 1-ին հարցի առթիվ`** զեկույցը ներկայացրեց նախագահողը` համայնքի ղեկավարը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամները հերթագրվեցին: Հարցերը տալու համար ըստ հերթագրման հաջորդականության` նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն ազգանունները` Սևակ Խաչատրյան և Ջիվան Աբրահամյան:

Սևակ Խաչատրյանը առաջարկեց հաստատվող Կանոնակարգի մեջ կատարել մի քանի փոփոխություն, մասնավորապես`

1)7.20-րդ կետի 2-րդ ենթակետում սահմանված <<ելույթի համար տրվում է մինչև հինգ թույլ ժամանակ>> մասում` 5 թույլ փոխարինել 10 թույլով,

2)7.20-րդ կետի 3-րդ ենթակետում սահմանված <<իսկ պատասխանի համար մինչև երեք թույլ>> մասում` 3 թույլ փոխարինել 5 թույլով,

3)7.20-րդ կետի 4-րդ ենթակետում սահմանված <<հարակից զեկուցողի ելույթը, ելույթի համար տրվում է մինչև երեք թույլ>> մասում` 3 թույլ փոխարինել 5 թույլով,

4)7.20-րդ կետի 5-րդ ենթակետում սահմանված <<հարցեր հարակից զեկուցողին, յուրաքանչյուր հարցի համար տրվում է մինչև երկուական թույլ, իսկ պատասխանի համար մինչև երեք թույլ>> մասում` 3 թույլ փոխարինել 5 թույլով,

5)7.20-րդ կետի 8-րդ ենթակետում սահմանված <<ելույթի համար տրվում է մինչև երեք թույլ ժամանակ>> մասում` 3 թույլ փոխարինել 5 թույլով:

6)Նշեց, որ Կանոնակարգի 7.24-րդ և 7.25-րդ մասերը կրկնվում են:

7)Առաջարկեց` 8.14-րդ կետի 7-րդ ենթակետում սահմանված << հիմնական զեկուցողին ելույթի համար տրվում է մինչև տասը թույլ ժամանակ, իսկ հարակից զեկուցողին` մինչև հինգ թույլ>> մասը փոխել և սահմանել հետևյալ կերպ <<հիմնական զեկուցողին ելույթի համար տրվում է մինչև տասնհինգ թույլ ժամանակ, իսկ հարակից զեկուցողին` մինչև տաս թույլ>>,

8) 8.14-րդ կետի 11-րդ ենթակետում սահմանված <<Յուրաքանչյուր ելույթի համար տրվում է մինչև հինգ թույլ>> մասում` 5 թույլ փոխարինել 10 թույլով:

9) 8.14-րդ կետի 12-րդ ենթակետում սահմանված << որոնցից յուրաքանչյուրին ելույթի համար տրվում է մինչև երեք թույլ>> մասում` 3 թույլ փոխարինել 5 թույլով:

Ըստ հերթագրման հաջորդականության` հարց տվող Ջիվան Աբրահամյանը հանեց իր հերթագրումը, նշելով, որ գրեթե նույնատիպ հարցեր ուներ ինչ, որ առաջին հերթագրվածը:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո, որոշվեց կատարել փոփոխություններ ըստ ավագանու անդամ Սևակ Խաչատրյանի առաջարկությունների, բացառությամբ սույն արձանագրությամբ գրանցված 8-րդ և 9-րդ կետերով տրված առաջարկների, նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

**Քվեարկությանը մասնակցեց –** ավագանու 27 անդամ

**Քվեարկության արդյունքները`** կողմ - 27

դեմ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

Ծանուցում՝ որոշման տակ բացակայում են ավագանու անդամներ՝ Նաիրա Գրիգորյանի, Քրիստինե Հակոբյանի, Ջիվան Աբրահամյանի և Կարինե Միքայելյանի ստորագրությունները, չնայած նարան, որ վերջիններս մասնակցել են քվեարկությանը և քվեարկել են կողմ:

Էջմիածին քաղաքի ավագանին ընդունում է թիվ 4 որոշումը:

**Օրակարգի 2-րդ հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց նախագահողը՝ համայնքի ղեկավարը:

Ներկայացնելով ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի ավագանու 29.05.2007 թվականի թիվ 4 որոշմամբ հաստատված Էջմիածին քաղաքային համայնքի զինանշանը և դրոշը որպես ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի զինանշան և դրոշ օգտագործելու համաձայնություն տալու և զինանշանի մեջ գրառման փոփոխություն կատարելու մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամները չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

**Քվեարկությանը մասնակցեց –** ավագանու 27 անդամ

**Քվեարկության արդյունքները՝**  
կողմ - 26  
դեմ – 1  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ**

Ծանուցում՝ որոշման տակ բացակայում են ավագանու անդամներ՝ Նաիրա Գրիգորյանի, Քրիստինե Հակոբյանի, Ջիվան Աբրահամյանի և Կարինե Միքայելյանի ստորագրությունները, չնայած նարան, որ վերջիններս մասնակցել են քվեարկությանը և քվեարկել են կողմ:

Էջմիածին քաղաքի ավագանին ընդունում է թիվ 5 որոշումը:

**Օրակարգի 3-րդ հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց նախագահողը՝ համայնքի ղեկավարը:

Ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների և Ոսկեհատ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրերը սահմանելու մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

**Քվեարկությանը մասնակցեց –** ավագանու 27 անդամ

**Քվեարկության արդյունքները՝**  
կողմ - 27  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

Ծանուցում՝ որոշման տակ բացակայում են ավագանու անդամներ՝ Նաիրա Գրիգորյանի, Քրիստինե Հակոբյանի, Ջիվան Աբրահամյանի և Կարինե Միքայելյանի ստորագրությունները, չնայած նարան, որ վերջիններս մասնակցել են քվեարկությանը և քվեարկել են կողմ:

Էջմիածին քաղաքի ավագանին ընդունում է թիվ 6 որոշումը:

**Օրակարգի 4-րդ հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց նախագահողը՝ համայնքի ղեկավարը:

Ներկայացնելով համայնքային կառավարչական հիմնարկների գործունեությունը դադարեցնելու մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

**Քվեարկությանը մասնակցեց –** ավագանու 27 անդամ

**Քվեարկության արդյունքները՝**  
կողմ - 27  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

Ծանուցում՝ որոշման տակ բացակայում են ավագանու անդամներ՝ Նաիրա Գրիգորյանի, Քրիստինե Հակոբյանի, Ջիվան Աբրահամյանի և Կարինե Միքայելյանի ստորագրությունները, չնայած նարան, որ վերջիններս մասնակցել են քվեարկությանը և քվեարկել են կողմ:

Էջմիածին քաղաքի ավագանին ընդունում է թիվ 7 որոշումը:

**Օրակարգի 5-րդ հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց նախագահողը՝ համայնքի ղեկավարը:

Ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու և կանոնադրությունը հաստատելու մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

**Քվեարկությանը մասնակցեց** – ավագանու 27 անդամ

**Քվեարկության արդյունքները՝**  
կողմ - 27  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

Ծանուցում՝ որոշման տակ բացակայում են ավագանու անդամներ՝ Նաիրա Գրիգորյանի, Քրիստինե Հակոբյանի, Ջիվան Աբրահամյանի և Կարինե Միքայելյանի ստորագրությունները, չնայած նարան, որ վերջիններս մասնակցել են քվեարկությանը և քվեարկել են կողմ:

Էջմիածին քաղաքի ավագանին ընդունում է թիվ 8 որոշումը:

**Օրակարգի 6-րդ հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց նախագահողը՝ համայնքի ղեկավարը:

Ներկայացնելով համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

**Քվեարկությանը մասնակցեց** – ավագանու 27 անդամ

**Քվեարկության արդյունքները՝**  
կողմ - 27  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

Ծանուցում՝ որոշման տակ բացակայում են ավագանու անդամներ՝ Նաիրա Գրիգորյանի, Քրիստինե Հակոբյանի, Ջիվան Աբրահամյանի և Կարինե Միքայելյանի ստորագրությունները, չնայած նարան, որ վերջիններս մասնակցել են քվեարկությանը և քվեարկել են կողմ:

Էջմիածին քաղաքի ավագանին ընդունում է թիվ 9 որոշումը:

**Օրակարգի 7-րդ հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց նախագահողը՝ համայնքի ղեկավարը:

Ներկայացնելով Վաղարշապատի համայնքապետարանի նոր աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

**Քվեարկությանը մասնակցեց** – ավագանու 27 անդամ

**Քվեարկության արդյունքները՝**  
կողմ - 27  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

Ծանուցում՝ որոշման տակ բացակայում են ավագանու անդամներ՝ Նաիրա Գրիգորյանի, Քրիստինե Հակոբյանի, Ջիվան Աբրահամյանի և Կարինե Միքայելյանի ստորագրությունները, չնայած նարան, որ վերջիններս մասնակցել են քվեարկությանը և քվեարկել են կողմ:

Էջմիածին քաղաքի ավագանին ընդունում է թիվ 10 որոշումը:

Նիստը նախագահողը հայտարարեց ընդմիջում 15 րոպե: Ընդմիջումից հետո նիստն սկսվեց ժամը 15:30-ին, որին մասնակցում էին ավագանու 27 անդամից 23-ը անդամ, բացակայում էին ավագանու անդամներ՝ Նաիրա Գրիգորյանը, Քրիստինե Հակոբյանը, Ջիվան Աբրահամյանը և Կարինե Միքայելյանը:

**Օրակարգի 8-րդ հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց նախագահողը՝ համայնքի ղեկավարը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի ենթակայության տակ գտնվող կառույցների 2022թ. աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամները հերթագրվեցին: Հարցերը տալու համար ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն և ավագանու անդամները՝ Վահրամ Ղարիբջանյան, Էմմա Պատուրյան և Սևակ Խաչատրյան:

Վահրամ Ղարիբջանյանը հարցրեց.

- Վաղարշապատ համայնքապետարանի «Թիվ 1 մարզադպրոց» ՀՈԱԿ-ի աշխատակիցների հաստիքացուցակում ինչու է սահմանված օպերատորի հաստիք, երբ առկա է ադմինիստրատորի 2 հաստիք:

Հարցը քննարկվեց և որոշվեց հաստիքացուցակից հանել օպերատորի հաստիքը:

Ըստ հերթագրման հաջորդականության՝ հարց տվող Էմմա Պատուրյանը առաջարկեց Վաղարշապատ համայնքի «Բարեկարգում» տնօրինության հաստիքացուցակում «Գերեզմանատուն» տեղամաս մասում ավելացնել բանվորի հաստիքներ, որպեսզի բարեկարգեն գերեզմանատները:

Հարցին պատասխանեց նիստը նախագահողը, նշելով, որ «Բարեկարգում» տնօրինության հաստիքացուցակում «Բարեկարգում և կանաչապատում» տեղամաս մասում առդեն առկա է բանվորների հաստիքներ, որոնք սպասարկում են նաև գերեզմանատները:

Հաջորդ իր հարցով Էմմա Պատուրյանը հարցրեց.

- Վաղարշապատ համայնքապետարանի երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ների աշխատակիցների հաստիքացուցակում մանկավարժների սահմանված դրույքները (աշխատավարձը) ֆիքսված դրույքաչափ է:

Հարցին դրական պատասխան տվեց նիստը նախագահողը:

Ըստ հերթագրման հաջորդականության՝ հարց տվող Սևակ Խաչատրյանը

Սևակ Խաչատրյանը հարցրեց.

- Ինչու է Վաղարշապատ համայնքապետարանի «Հովհաննես Հովհաննիսյանի տուն-թանգարան» ՀՈԱԿ-ի աշխատակիցների հաստիքացուցակում առկա տնօրենի և վարիչի հաստիքներ, ինչո՞վ են դրանք տարբերվում և արդյոք ավելի լավ չէր լինի «վարիչ» հաստիքի փոխարեն գրառել «տնօրենի տեղակալ» հաստիքը, ավելացնելով վերջինիս դրույքաչափը:

Նիստը նախագահողը առաջարկեց դեռ այդպիսի փոփոխություն չկատարել, սակայն նշեց որ առաջարկը կուսումնասիրվի հատազան նիստերի ժամանակ:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

**Քվեարկությանը մասնակցեց** – ավագանու 23 անդամ

**Քվեարկության արդյունքները՝**  
կողմ - 23  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

Էջմիածին քաղաքի ավագանին ընդունում է թիվ 11 որոշումը:

**Օրակարգի 9-րդ հարցի առթիվ՝** գեկույցը ներկայացրեց նախագահողը՝ համայնքի ղեկավարը:

Ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակելու մասին նախագիծը:

Նիստի նախագահողը բեմ հրավիրեց Վաղարշապատ համայնքի ղեկավարի առաջին տեղակալի թեկնածու Արսեն Պետրոսյանին:

Արսեն Պետրոսյանը ներկայացավ ավագանու անդամներին, ներկայացնելով իր ինքնակենսագրությունը և գործունեությունը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

**Քվեարկությանը մասնակցեց** – ավագանու 23 անդամ

**Քվեարկության արդյունքները՝**  
կողմ - 22  
դեմ – 0  
ձեռնպահ – 1

**Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ**

Էջմիածին քաղաքի ավագանին ընդունում է թիվ 12 որոշումը:

**Օրակարգի 10-րդ հարցի առթիվ՝** գեկույցը ներկայացրեց նախագահողը՝ համայնքի ղեկավարը:

Ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին նախագիծը:

Նիստի նախագահողը բեմ հրավիրեց Վաղարշապատ համայնքի ղեկավարի տեղակալի թեկնածու Մհեր Մկրտչյանը:

Մհեր Մկրտչյանը ներկայացավ ավագանու անդամներին, ներկայացնելով իր ինքնակենսագրությունը և գործունեությունը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

**Քվեարկությանը մասնակցեց** – ավագանու 23 անդամ

**Քվեարկության արդյունքները՝**  
կողմ - 23  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

Էջմիածին քաղաքի ավագանին ընդունում է թիվ 13 որոշումը:

**Օրակարգի 11-րդ հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց նախագահողը՝ համայնքի ղեկավարը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի «Կոմիտասի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ի, «Մ. Եկմայանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց» և «Ս.Մելիքյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ների դահլիճների վարձակալության վճարների չափերը սահմանելու մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամները հերթագրվեցին: Հարցերը տալու համար հերթագրվեց Ներսես Մելիքյանը:

Ներսես Մելիքյանը առաջարկեց ավագանու մյուս նիստին քննարկել նաև Ոսկեհատ գյուղում առկա Վաղարշապատ համայնքի ենթակայությանը անցնող ՀՈԱԿ-ների դահլիճների վարձակալության վճարների չափերը:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

**Քվեարկությանը մասնակցեց** – ավագանու 23 անդամ

**Քվեարկության արդյունքները՝**  
կողմ - 23  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

Էջմիածին քաղաքի ավագանին ընդունում է թիվ 14 որոշումը:

**Օրակարգի 12-րդ հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց նախագահողը՝ համայնքի ղեկավարը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի «Կոմիտասի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ի պարասրահների 2022 թվականի վարձավճարների չափերը սահմանելու մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

**Քվեարկությանը մասնակցեց** – ավագանու 23 անդամ

**Քվեարկության արդյունքները՝**  
կողմ - 23  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

Էջմիածին քաղաքի ավագանին ընդունում է թիվ 15 որոշումը:

**Օրակարգի 13-րդ հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց նախագահողը՝ համայնքի ղեկավարը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի թիվ 1 մարզադպրոց ՀՈԱԿ-ի դահլիճների վարձակալության վճարների չափերը սահմանելու մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

**Քվեարկությանը մասնակցեց** – ավագանու 23 անդամ

**Քվեարկության արդյունքները՝**

կողմ - 23  
դեմ - 0  
ձեռնպահ - 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

Ծանուցում՝ որոշման տակ բացակայում են ավագանու անդամ՝ Աննա Գիրակոսյանի ստորագրությունը, չնայած նարան, որ վերջինս մասնակցել է քվեարկությանը և քվեարկել է կողմ:

Էջմիածին քաղաքի ավագանին ընդունում է թիվ 16 որոշումը:

**Օրակարգի 14-րդ հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց նախագահողը՝ համայնքի ղեկավարը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատվություններում երեխաներին տրվող սննդի անվանացանկը և օրական նորմաները հաստատելու մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

**Քվեարկությանը մասնակցեց** – ավագանու 23 անդամ

**Քվեարկության արդյունքները՝**

կողմ - 23  
դեմ - 0  
ձեռնպահ - 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

Էջմիածին քաղաքի ավագանին ընդունում է թիվ 17 որոշումը:

**Օրակարգի 15-րդ հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց նախագահողը՝ համայնքի ղեկավարը:

Ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Էջմիածին համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18 - ի N 133-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

**Քվեարկությանը մասնակցեց** – ավագանու 23 անդամ

**Քվեարկության արդյունքները՝**

կողմ - 23  
դեմ - 0  
ձեռնպահ - 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

Էջմիածին քաղաքի ավագանին ընդունում է թիվ 18-Ն որոշումը:

Օրակարգի հարցերը սպառվելուց հետո Ավագանու նիստը հայտարարվեց փակված:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**